

դաբար, Նիժնի Նովգորոդից, մի պատուելի հայ տիկին ուղարկեց մեզ 100 ռուբլ, որպէս նուէր «Կայծերի» հրատարակութեան համար: Գրականութեան վիճակը պէտք է բաղդաւոր համարել, երբ կրնա սկսում է համակրել:

Բաժնի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կեկտեմբերի 2-ին հրատարակեցաւ Մոսկովում «Русский Курьер» լրագրի 211 համարը: Ինչպէս յայտնի է այդ լրագիրը ներքին գործերի մինիստրի հրամանով դադարեցրած էր մի քանի ամսով:

Բաշնորաշին գիւղից, պ. Հայկ Տէր-Ամբակունեանցից ստացանք 4 ռուբլ բաժանորդագին «Ժողովուրդ» համար: Առաջվայ փողերի հետ կանի 908 ռուբլ 15 կոպէկ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԻԱ

Փարիզի «առեարական ժողովը», որ իր ձեռքի տակ ունէր երկու ուսումնարաններ 1,600 աշակերտներով, նորերումս բացարեց «բարձրագոյն առեարական ուսումնարան», որի համար Մայքըրը բուլվարի վրա ահա գին և ընդարձակ շինութիւն է կառուցված: Ուսումնարանի հանդիսաւոր բացման ժամանակ ներկայ էին մի քանի մինիստրներ և բազմաթիւ պատգամաւորներ: Այստեղում էին Գամբետտային, բայց նա ուղարկեց ասել, որ ինքը չէ կարող ներկայ գրանալ: Առեարական ժողովի նախագահը մի ծառ արտասանեց, որով մեկնեց ուսումնարանի նպատակները և կոչումը և ասաց, թէ առեարներն էլ արդիւնաբերութեան չափ գիտութիւն և գործունէութիւն է պահանջում: Նա յայտնեց, որ կառավարում

սենեակում, դուռը բաց կանգնի, և ներքինու գրութիւնը ու մարմինը ոտնակալի անկող, կանգնել և կը մանկը ազատի: Սենեակը Նա վաճաղի մէջ բռնված անընտել թուշուրի նման անդադար թուգում էր այն կողմ և այն կողմ: Հարկւր անգամ նայեց իր անկողին մէջ հարկւր անգամ չօղանց նրան, բայց դարձեալ չէր հաւատում իր աչքերին, թէ իր դաւակը այնտեղ չէր: Որդեկորայ մայրը բոլորովին չփոթված էր: Կասկածը նրա մէջ կատաղութեան հասաւ, երբ թնդանթները սկսեցին այժմ աւելի և աւելի յաճախ ուրտալ: Նա ուղարկեց եղաւ, ընկաւ այն գոհարները վրա, որ մի քանի լուպէ առաջ սփռված էին գորգերի վրա և զարգարում էին նրանց գեղեցիկութիւնը:

Աղանի սենեակում ճրագը գեռ վառվում էր: Ինքը, աղանինը, որին կոչում էին փարիշան, նստած էր իր տիկնոջ երեխայի փոքրիկ անկողնի մօտ: Նրեխան քնած էր: Նրա ծանր չնչառութիւնը ցոյց էր տալիս, որ բոլորովին առողջ չէ, և իրաւ, մի քանի օր էր, որ կոկորդի ուսուցիչը էր ստացել:

Նա գլուխը վեր բարձրացրեց, և կիսաբաց աչքերով նայելով աղանինի վրա, ասաց.

— Զուր եմ ուզում:

— Կը տամ, դաւակս, կը տամ, ասաց աղանինը և վեր կացաւ կատարելու նրա պահանջը: Նրեխան ջուրը խմելուց յետոյ, գլուխը կրկին դրեց բարձի վրա և խոլոյն քուն եղաւ: Աղանինը դարձեալ նստեց իր առաջվայ տեղում, հիւանդի անկողնի մօտ: Արդեօք ցաւակցութիւնը, թէ պարտաճանաչութիւնն էր ստիպում այդ մանկահասակ կնոջը հակել իր հիւանդի մահճի մօտ, — յայտնի չէ, միայն երևում էր, որ նա վճռել էր այս գիշեր ամենին չը քնել: Գոցէ նա նոյնքան վախճում էր, որպէս միւսները և երկուքը խել էր նրա աչքերից քունը գոցէ պաշարված ամբողջ նրան նոյնքան սարսափեցնում էր, որպէս միւսներին:

Կրկին լսելի եղաւ թնդանթի որոտումը:

Բայց այդ կործանիչ որոտումը, որ ուրիշների վրա սոսկում էր բերում, կարծես, նրան մի ա-

թիւնը բոլոր միջոցներ գործ կը դնէ առեարական դաշնագիրներ կապելու համար, որովհետեւ ինչպէս քաղաքականութեան համար, նոյնպէս և առեարի համար ազատութիւնը ամենայն միջոց է: Առեարական մինիստր Բուլիէ մի ծառ արտասանեց, որով ցոյց տուեց երկրի անտեսական աջողութիւնները, նախագծված երկաթուղիները, ջրանցքները և նաւահանգիստները: Նա յայտնեց, որ նոր ընդհանուր տարիքը հինգ տարի ազատամիտ է: Ժամանակ է վերանորոգել առեարական դաշնագիրները: Մի քանի պետութիւնների հետ դաշնագիրները վերանորոգված են, միւսների հետ բանակցութիւններ են կատարվում: Կառավարութիւնը կաշխատի պաշտպանել և զարգացնել առեարական դաշնակցութիւններին ձեռք, որ անհրաժեշտ է առեարական նշանաւոր գործերի համար: Ազատութիւնը կինդանութիւն է տալիս առեարական գործունէութեանը: Տնտեսական զարգացման առաջին պայմանները ազատութիւնը և խաղաղութիւնն են կապում: Թէ առաջինը և թէ երկրորդը ապահոված են ժողովրդի կաճումը և այժմեան կառավարութեան քաղաքականութեամբ: Բայց մասնաւոր գործերը պէտք է նպատեն հասարակական ջանքերին: Առեարական ժողովը հասկացաւ այդ և ստեղծեց մի հիմնարկութիւն, որ առեարական մեծ գործերի համար ընդունակ մարդիկ կը պատրաստէ: Այդ ուսումնարանը պէտք է ոչնչացնէ նախապաշարունակները առեարի դէմ, իբրեւ գործունէութեան երկրորդական կարգի դէմ: Բուլիէ օրինակ բերեց վաճառականին, որ առեարական յարաբերութիւններ ունի ամբողջ աշխարհի հետ և գիտէ, թէ ինչպիսիս արդիւնաբերութիւնը և ինչպիսիս հում նիւթ պէտք է բերել տայ: Մինիստրը ինչպէս գիտնականին, զինուորին կամ

աւանձին զուարճութիւն էր պատճառում: Նրա տխրամած դէմքը աւելի և աւելի պայծառանում էր և խոյր աչքերում վառվում էր ուրախութեան կրակը: Թշնամու թնդանթի ձայնը արձագանք էր գտնում նրա սրտում, խորին բերկրութեան արձագանք:

Նա վեր կացաւ, ճրագը վեր առեց, ուշիկ քայլերով դուրս եկաւ: Մի քանի վայրկեան կանգնեց նախասենեակում, նայում էր պահած ներքինու վրա: Ծերունու խռովաւոր ձայնը արդէն ցոյց էր տալիս, որ նրա քունը խիստ ծանր էր: Նա գլուխը վեր մտնեցաւ տիկնոջ սենեակի դռանը: Թէ և ներքինու գլուխը և բարձր դրած էին նրա հանգէպ, բայց նրանք այնքան տեղ չէին բռնում, որ արգելէին աղանինի մօտենալը: Նա մի կողմում կանգնելով, թեքվեցաւ և աղանինը ուղարկեց խոստովաւորել: Ուսում փոքրիկ ձեղքը: Ներսից ոչ մի շունչ լսելի չէր լինում: Նա մտածեց, որ տիկինը, երեխ, քնած է, թէ և նա դուռ ուղարկեց իր մէջ էր գտնվում:

Նա կրկին ուշիկ քայլերով վերադարձաւ իր սենեակը, ճրագը դրեց իր տեղում և նստեց հիւանդի անկողնի մօտ: Մի քանի լուպէ գրտնվում էր մի տեսակ անվճարականութեան մէջ, որ խիստ հեշտ կարելի էր նկատել նրա բազմահոգ դէմքից: Յետոյ կամաց-կամաց ձեռքը տարաւ դէպի հիւանդի վերմակը և զգուշութեամբ կիսով չափ բարձրացրեց: Նա այժմ մի առանձին երկրաշարժութեամբ նայում էր գեղեցիկ երեխայի երեսին, նայում էր դողալով և չէր վստահանում կատարել այն, ինչ որ մտածում էր:

— Գնե՛՛՛... քնե՛՛՛... լսելի եղաւ կանանոցի բարձր աշտարակի զլխից:

Կա ներքինապետի հրամայական ձայն էր, որ իր դիտանոցից նայում էր ամբողջ հարկւրի վրա: Այդ աշտարակը մի այնպիսի տեղում էր կանգնած, որ նրա բարձրութիւնից կարելի էր տեսնել կանանց բոլոր օթեակներին լուսամուտները: Այդ սպառնալից ձայնը լսելի էր լինում ամեն գիշեր երեք անգամ: Առաջին անգամին պէտք է բոլոր կնիկները իրանց ընթերթը կերած, վեր-

արհեստագէտին, վաճառականին էլ երկրի ոյժերից մէկն է համարում: Վաճառականը պէտք է լինի համարձակ, ազնիւ և զգոյշ: Բացված ուսումնարանի աշակերտները քրանսիան սպասում է, որ նրանք ոչ թէ միայն վաճառականներ, այլ և ազգասէրներ կը լինեն: Սկիստի նախագահ Նէօն Սէ նոյնպէս մի քանի խօսք ասաց: Իր ընտանեկան աւանդութիւնների համեմատ նա յարգում է առեարը և ուսումնարանի ապագայ աշակերտներին հրաւիրում է ուսումնասիրել առեարը և դրամական գործերը ոչ թէ միայն անձնական, այլ և քրանսիայի հարատւութեան համար, որ իր արդիւնաբերութեան շնորհիւ վերջին տասնարկների ընթացքում յաղթեց այնպիսի դժուարութիւնների, որոնք անկեղէն համարվում:

Ներկայումս Գամբետտա զբաղված է քրանսիական նաւատորմի մանրամասն ուսումնասիրութեամբ: Նա այդ նաւատորմը անբաւարար է համարում քրանսիայի ժամանակակից պետքերի համար և մտադիր է պատգամաւորների ժողովին առաջարկել, որ ասա հատ գրահալիկ: Նոր նաւեր կառուցանվեն: Սպասում էին, որ սենատին կառաջարկվի մասնաժողովի գեկուցումը Տուրիսի կրեդիտի մասին, բայց գեկուցանող լանգուա յայտնեց, որ գեկուցումը դեռ պատրաստ չէ: Ֆինանսների մինիստրը մեկնեց, որ կառավարութեան և մասնաժողովի մէջ անհամաձայնութիւն կայ այն հարցի մասին, թէ արդեօք իրաւունք ունի պատերազմական մինիստրը արտաքին կարգի կրեդիտից աւելի ծախս անել: Մինիստրը յղաւ ունի, որ այդ հարցի վերաբերութեամբ համաձայնութիւն կը կայանայ կառավարութեան և մասնաժողովի մէջ: «France» լրագիրը հաղորդում է, որ կը նշանակվեն քրանսիական հետեւեալ նոր

ջացրած լինին, երկրորդ անգամին պէտք է ճրագները մարել և քուն լինեն: Իսկ երրորդ անգամին դռները փակվում էին և յարաբերութիւնները բոլորովին արգելվում էին:

Ներքինապետի այժմեան զգուշացուցիչ ձայնը երկրորդ անգամին էր պատկանում, որով մի քանի լուպէից յետոյ ամբողջ հարկւրի մէջ պիտի տիրէ խաւարը: Այդ ձայնը, կարծես, չտապեցրեց աղանինին կատարել իր դիտանոցի վերջը, որի համար նրա քաջութիւնը պակասում էր: Նա ձեռքը դողողալով տարաւ: Դէպի հիւանդի պարանոցը, բռնեց նրա կոկորդից և բխմամբ ու ցուցամտով այնպէս պինդ սեղմեց ուսուցիչը, որ երեխան թփաւաց, դողողաց, խռովաց և ապա սկսեց սաստիկ ծիւ բարձրացնել:

Այդ միջոցին աղանինը զարմանալի արագութեամբ վեր թռաւ, ոտքով զարկեց ճրագին, ցած գցեց, ճրագը հանգաւ, իսկ ինքը խաւարի միջից դուրս պրծաւ բարձր ձայնով գոչելով: «Խեղճվեցաւ, խեղճվեցաւ, օգնեցէ՛ք, խեղճվեցաւ»...

Նա վազեց դէպի տիկնոջ սենեակը, իր ոտքերի տակ կոխ տալով, արտիկով պահած ներքինու, որը սարսափելով դարձեց, և չը կատարանալով խոլոյն հստակաւ պատահածը, իր ստակալի չփոթութեան մէջ կարծում էր, թէ ահա թշնամիները ներս թափվեցան ամբողջ մէջ, սկսել են բոլորին կտորել: «Օգնեցէ՛ք... օգնեցէ՛ք... սկսեց աղաղակել և նա, դուրս վազելով դէպի կանանոցի բակը:

Ոչ տակաւ եղաւ և աղանինը զարնուանքը, երբ նա մտաւ տիկնոջ սենեակը, ճեմնելով նրան գունաթափ, զիտիկ նման ընկած յատակի վրա, — տեսնելով այնտեղ ուղիւս գոհարները, սենեակի անկարգութիւնը, փշուրած արկղիկը, — նա կարծեց, թէ Տէնց նայն լուպէում այնտեղից փախաւ աւաղակը, որը իր տիկնոջը սպանելով, կողոպտել էր նրա սենեակը:

Բայց նա այնքան սրտի և մաքի ամբողջութեամբ ունէր, որ բոլորովին չը շուարկեցաւ: Մասնաւոր, երբ նայեց լուսամուտներին, գտաւ նրանց ամբողջութեամբ իրանց տեղում փակված:

դեպաններ, Շարմել-Լակուր, Բերլին, Տիսսո, Լօրդոն և Զոգորդի» Կ. Պոլիս:

Պարլամենտական մասնաժողովը, որ նրանակված է գահաւարի ընտրականները ծախելու համար, բացի պատմական հազուադէպ իրեղեններից, իր նախագահ ընտրեց Բապայլին և մանրամասնօրէն քննեց ոչնչացրած գահի թանգազին իրեղենները: Գեկուցութեան ժամանակ մինիստր Անտոնէն Պրուցանկանում է պահպանել այն բոլոր իրեղենները, որոնք պատմական կամ գեկուցութեան նշանակութիւն ունեն: Բայց պակասում է միայն մի քանի առեարական պահելի, յուսալով թանգազին իրեղենների վաճառումից ստանալ 3,00,000 ֆրանկ: Այդ գումարից ստացված եկամուտները պէտք է գործ դնվեն ծեր և հիւանդ բանաւորների ապահովութեան համար: Մասնաժողովը իբրեւ էկզպիւրտ հրաւիրեց Բապայլին, որ խորհուրդ է տալիս պահպանել հետեւեալ առեարականը. օտար շքանշանների հաւաքածուն, որի գինը 200,000 ֆրանկ է, ժամացոյցը, որ Ալիսի բէյ ընծայել է Լուզովիկոս XIV, գինը 3000 ֆրանկ, մի սուր, որի գինը 250,000 ֆրանկ է: Բապայլ խորհուրդ չէ տալիս ծախել երեւելի բրիլլանտ «Բեկնա», որի գինը 12 միլիոն է: Անուրով ծախելու ժամանակ նա կարող է 800,000 ֆրանկով ծախվել և մի աֆերիստի ձեռք կարող է ընկնել, որ այդ բրիլլանտն իր հետ առած կը շրջի ամբողջ աշխարհը: Նրան ցոյց տալու նպատակով:

ՀՐԴԵՆՎԻՆՆԱՅԻ ԹԱՏՐՈՆԻՄ

Վիեննայի թատրոնի մէջ պատահած հրդեհի մասին հաղորդում են հետեւեալ մանրամասները: Հրդեհը սկսվեցաւ եօթ

խոլոյն մասերից, թէ ինքն էր, որ ներքինում կոխ տալով, անցաւ նրա վրայից և բաց արաւ: Դուռը: Ուրիմն ոչ մի տեղից աւազակ մտնել չէր կարող: Նա զգաց իր սխալը և չտապեց իր ձեռնարկութեանը մի այլ կերպարանք տալ: Առանց մի վայրկեան կորցնելու, տիկնոջը նոյն դուռից անց մէջ թողնելով, նա դուրս վազեց կանանոցի բակը, որ թող չը տայ յիմար ներքինում շատ արդուկ բարձրացնել:

— Առաջ, Առաջ, ձայն տուցի նրան մօտենալով, — Ինչ ես խեղճ կորցրել, այնտեղ մեր տիկինը մտնում է, այնտեղ նրա երեխան խեղճվում է, իսկ դու բակում կանգնած, աղաղակներ ես բարձրացնում: Գնանք, գնանք շուտով: Ինչ է պատահել, հարցրեց չփոթված Առաջը, ամենին չը հասկանալով իր լսածը:

— Եկ, տես, թէ ինչ է պատահել, քաղաքում, մոռնիկ նման քնում ես, ու ոչինչ բանից տեղեկութիւն չունես: Վերջին խօսքերից յետոյ աղանինը համարեաւ ուժով բռնեց նրա ձեռքից և քարշ տուեց դէպի տիկնոջ սենեակը:

Բայց ներքինին, ցոյց տալու համար, թէ ինքն էլ մի բանից տեղեկութիւն ունի, մտաբերեց աղանինի խօսքերից մէկը միայն: «Խեղճվում է» և հարցրեց.

— Կու սասցիր խեղճվում է, ով է խեղճվում:

— Առաջ, յիմար, դու չես իմանում, քանի օր է, որ նա հիւանդ է, կոկորդը ուռնել է, հիւանդ ցաւը սաստկացել է, խեղճվում է:

— Տիկնոջ հետ ինչ է պատահել:

— Ես ինչ գիտեմ, ինչ է պատահել, տիկինը իր սենեակում ընկած է: Ներքինին այժմ բաւական բան հասկացաւ և աղանինի հետ չտապեց դէպի տիկնոջ սենեակը: Բարեբախտաբար թէ աղանին և թէ ներքին նուր բարձրացրած աղաղակները արձակվեցան մի և նոյն բուպում, երբ բերդից սկսեցին պատասխանել թշնամու թնդանթներին: Գրանց ձայնը խլացաւ հրանթների ընդհանուր զդրումների մէջ: Կանանոցում ոչ ոք չիմացաւ պատահած աղանինը, և ոչ ներքինապետը, որը իր դիտանոցի

ժամից տասն րոպէ պակաս: Քառասունը բա-
ւական լինէն էր, բայց հասարակութեան
բաւական նշանաւոր մասը ֆոյիէներում և
անցքերում էր գտնուում: Լուսանքը մանա-
ւանդ առաջին յարկում մեծ մասամբ դա-
տարկ էին: Բայց գալիւրէյը արդէն լինէն էր
խաղում էին երկրորդ անգամ «Ֆոմանի
ատակները»: Բեմի վրա պատրաստութիւն-
ներ էին տեսնուում, այնպէս որ դերասան-
ները և երգիչները մի մասը արդէն շարքը
հաղել էին, բայց նրանց մեծ մասը դեռ
հաղելուում էր: Ուշերակը դեռ չէր բախ-
վել: Մի քանիսը ասում են, որ կրակը ըս-
կալեցաւ զալմանական գործիքի կայծից, որ
վառեց վարակողը, միանկը, թէ դժբաղ-
դութեան պատճառը մի բանն էր, որ
վայր ձգեց սպիրտի լամպը: Հրդեհի իսկա-
կան պատճառը ոչ ոք չը գիտէ և երեւի
չի էլ իմանայ: Հրդեհը ամենից առաջ նը-
կատեց կապելմէյստեր, որ բեմի վրա էր:
Նա հազիւ կարողացաւ ձայն հանել, երբ
զեկօրացիները արդէն այրվում էին և
բոցը տարածվեց ամբողջ բեմի վրա: Գերա-
սանները վազեցին դէպի դռները, բայց շու-
տերը չը նկատելով վտանգը, գնացին իրանց
սենիակները իրանց սեփականութիւնը վերց-
նելու համար: Մի քանիսը հազնվելու տե-
նակներէից կատարելապէս մէկի դուռն թա-
փեցան: Այդ ժամանակ ծանր քարաղոյրը
բարձրացաւ: Բոցը տարածվեցաւ դահլիճի
մէջ: Քառասունը դրան մօտ հաւաքված ժո-
ղովուրդը ներսից սարսափելի աղաղակ լը-
սեց: Լամպում էին աղաղակներ, յիշողներ,
անէծքներ: Հասարակութիւնը վազում էր
դէպի անցքերը և այդ բոլոր աղմուկը ծած-
կում էր ներսից լսվող սարսափելի աղա-
ղակով: «Աղաւեսեք, աղաւեսեք»: Պատու-
հանները մէջ մարդիկ երևեցան, որոնք
պատրաստ էին փողոցը դուռն թռչել: Անց-
քերը ծածկվեցան խաւարով, որ աւելի էլ

շփոթեց հասարակութեանը: Միայն դահ-
լիճն էր լուսւորված և մի քանիսի ծա-
նապարհը լուսւորում էր: Ամենից սարսա-
փելի տեսարան ներկայացնում էին անցքե-
րը և սանդուղիները: Նրանք մի րոպէում
լցվեցան ամբողջ, այնպէս որ անկարելի
էր ոչ առաջ և ոչ յետ շարժվել: Մարդիկ
միմեանց գլխի վրա էին թռչում, ընկնում
էին և ծանապարհը կապում: Բացի այդ
խաւարի մէջ շփոթված մարդիկ էին կա-
րողանում ծանապարհ գտնել: Ազատվեցան
միայն այն ուժեղները, որոնք կարողացան
ամենից առաջ դուռն ընկնել: Բոցը արդէն
երևում էր թատրոնի կտուրի վրա, բայց
դեռ կառքերով թատրոն էին գալիս: Մի-
շն անգամ հրդեհաշէջները դեռ տեղեկու-
թիւն չունէին: Արջապէս եկան պոլիցիա-
կանները և հրդեհաշէջները: Նրանցից մի
քանիսը վազեցին դէպի կրակը: Միշն
դուրսը գործում էին հրդեհաշէջ մեքենա-
ներ, ներսը աշխատում էին բանալ ջրանց-
քերը: Մթութեան մէջ հրդեհաշէջները
բանում էին մոլորվածներին և դուռն էին
բերում: Բայց պատահում էր, որ նրանք
սխալմամբ ուժով դուռն էին բերում: Նրանց,
որոնք կամուրջապէս մտել էին վնասված-
ներին օգնելու համար: Վնասվածներին թի-
ւը հասնում է 600:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Русский Курьер» լրագրում կարդում
ենք, որ անդրկական «Standard» լրագիրը հա-
ղորդում է թէ կոմս Կալուսկի, ուղեւորելով
Վիեննայից Ս. Պետերբուրգ, յանձնարարութիւն
ստացաւ Նորին Կայսերական Մեծաթիւնից
հրաժարական տունուտ ժամանակ, խոսակցել
թէ քաղաքը կայսրի, թէ կոմս Կալուսկի-
ւի հետ արեւելեան հարցի մասին իր բոլոր
մանրամասնութիւններով, մասնաւոր փոխա-
ղարձ յարաբերութիւնների մասին: Բուստարի-
ւի և Քիւրբայի դէպի Հայաստանի
և Բոսնիայի դրութիւնը:

— Ֆրանսիական լրագիրները հաղորդում են,

որ Գամբետի քաղաքական դպրոցը դաս առաւ
երկու նոր միջնորդութիւններ հիմնելու պատ-
ճառով, և բոլոր չափաւոր և արմատական լրա-
գիրները զովում են զեկուցանող ընթերցի մի-
նիստերին նրա առաջին ծառայել պատասխանների
համար: Պատգամաւորների ժողովի և Գամբետի
մամուլի մեծամասնութեան արամադրութիւնը
մասնաւոր կն անում Գամբետայի հեղինակու-
թեան մի քիչ պակասելու վրա, որը ի հարկէ
ինքն էլ էր գիտում, վիճարանելով այդպիսի հա-
մատ հակառակորդի: Տեա, ինչպէս Քիւրբէն է
որին այնու ամենայնի, պատգամաւորների մե-
ծամասնութիւնը ծախհարում էր: Պատգամա-
ւորները, կարծես կամենում էին ապացուցանել
իրանց նախկին առաջնորդին, որ իրանք բոլոր-
ովին նպատակ չունեն անպայման հնազանդվել
նրան, և որ նրանք պատրաստ են պաշտպանել
իրանց անկախութիւնը և իրանց իրաւունքները
նրա անկախ պահանջների դէմ:

— «Presse» լրագիրն Սֆիսայից գրում են, որ
բոլորական միջնորդը գնդապետ Բէլլիսկէնի և
«Բոլորական Չախ» լրագրի խմբագիր Գերա-
նովի մէջ հետեւող անհամաձայնութիւն պատա-
հեց: Նոյեմբերի 16-ին միջնորդը պահանջեց
Գերանովից, որ նա 24 ժամվայ ընթացքում
յայտնէ Զուլայից գրված թղթակցութեան
հեղինակի ազգանունը: Գերանովի իր լրագրում
պատասխանեց, որ այդ պահանջը անիրա-
ն է և որ միջնորդը կարող է, եթէ կամենում է, դատի
կանչել նրան, ինչպէս որ ընդունված է անել
անհամաձայնական պետութիւնների մէջ: Բազմա-
ւորակէս միջնորդը յարմար ժամանակ հրաժար-
վեց իր դիտաւորութիւնից:

— «Courrier d'Orient» լրագիրն Բոսնիայի հե-
ռագրում են նոյեմբերի 30-ից, որ Անգլիան դի-
մեց Կանդաւարը Էմիր Աբդուրահմանին այն ժա-
մանակ, երբ վերջինը գրաւոր կերպով խոստա-
ցաւ ոչինչ բանի չը ձեռնարկել տաւանց անգլիա-
կան կառավարութեան համաձայնութեան և
պարտաւորվեց տեղեկութիւն տալ իր երկրի մէջ
եղած գործերի դրութեան մասին:

— «Times» լրագիրը հաղորդում է, որ առա-
ջին միջնորդի որդի Հերբէրտ Գալաքսիս իրան-
դիայի շատ չըբանները ծանապարհորդեց և հա-
շի կը սոյ իր հօրը իր ծանապարհորդութեան
մասին: Նա, ինչպէս երևում է, շատ անոտը տը-
պաւորութիւններ դուրս բերեց իր ծանապար-
հորդութիւնից:

— «Journal de St. Petersburg» լրագրում
հաղորդում է որ պ. Նովիկով և լորդ Գիլֆորդին
այցելելով Սաիփ-փաշային, աշխատեցին համոզել
նրան, որ ֆոյիէնի չափաւոր և և վերանոր-
ոգութիւններն առաջ առնան:

— Բերլինից «Порядок» լրագիրն հաղորդում
են որ պրոֆէսոր Մոսկէն զինված իր ընտրող-
ներին Կորուրդի մէջ, յայտնելով իր աղաքարու-
թեան մէջ Բիսմարկին խիստ ընդդիմադրական
մտքեր: Մոսկէն ասում է որ գերմանական աղ-
գը պէտք է ցոյց տայ Բիսմարկին իր պատշաճ

նուս փորձերով բաւական հմուտ էր այդ հիւան-
դութիւնը բռնկելու մէջ:

— Վէ գնա կանչել, մի ուշադիր, ձայն տուեց
տիկնիւր:— Նրեկտա կը մտնէր, եթէ նա չը գայ:

— Կո չը գնամ ֆարիշան: Տեա, հարցնեց ներ-
քինին երկուտ ձայնով:

— Հէնց դու էիր պակաս, քաղթաւ, պատաս-
խանեց աղախինը մի առանձին սպառնալիքով: Նա
յեղով ներքինու երևան:— Գու չես իմանում
որ հրամայված է այս գիշեր բոլոր հայերին կո-
տորել, և երկրիցն ոչ մի հայ այս գիշեր իր տանից
դուրս չի գա: Աս կը գնամ, մի կերպով կը հա-
մոզեմ, կը բերեմ Սաւային, բայց եթէ քո սեխը
տեսնելու լինի, կը վախնայ, ու չի գա:

Որովհետեւ գործը վերաբերվում էր մի ծանրա-
կշիռ հարցի, ինչպէս էր իր տիկնոջ դաւանակի
կեանքը, այդ պատճառով բարեպաշտ ներքինին
լուս կացաւ և չը պատասխանեց աղախինի կոպ-
տութիւններին: Բայց եթէ մի ուրիշ անգամ
լսելու լինէր նրանից այդ խօսքերը, անտարա-
կոյս նրա ծանկը կը փետել:

— Գու միայն անցկացրու ինձ դռներից, որ
պահպանները չարդեկեն, կրկին դարձաւ նա
դէպի բարկացած ծնուկը:

— Ներքինապետի գիտանոցի բարձրութիւնից
վաղուց արդէն լսելի էր եղած նրա կորուրդ ան-
գամի հրամայական ձայնը՝ «Երեւոյ», և կանանոցի
մէջ բոլոր դռները փակված էին, ոչ ոք իրա-
ւունք չունէր ներս ու դուրս անելու: Այս
պատճառով ներքինին նախ քան առաջնորդը
աղախինի դէպի Սաւայի տունը, զինից ներքի-
նապետի մօտ, որ նրան յայտնէ հիւանդի անց-
քը, և իմանալ գիշերվայ անուշը, որովհետեւ
առանց գիշերվայ անուշը տալու, պահպաննե-
րից և ոչ մէկը դռները չէր բաց անի:

Միշն ներքինու վերադառնալը ֆարիշանը բո-
ւորովին պատրաստ էր ծանապարհ ընկնելու
համար: Նա փախկեց իր գլուխը մի հաստ
շալով, ծածկվեցաւ իր կապտադուին չափայի
մէջ և դուրս գնաց: Տիկնիւր մնաց միայնակ
աղախինի սենեակում, զրկած ունեւոր երեխան
մայրական կուրծքի վրա, որը այդ միջոցին սաս-

տեղը և համոզել նրան որ անհատ մարդը, ինչ-
քան բարձր էլ լինի այդ մարդը, չէ փորձ իրան
ամբողջ ազգութիւնից բարձր համարել: Գերմա-
նական կանցլէր, աւելացնում է պրոֆէսորը,
յայտնի է իր ընտրութեան զօրութեամբ, բայց
գերմանական ազգը յայտնվել է միշտ աւելի էլ
մեծ հաստատաւորութեամբ և տոկոսութեամբ:

— Վիեննայի Օպերա-կոմիկ թատրոնի հրդեհի
մանրամասնութիւնները սարսափելի են: Հրդեհը
սկսվեցաւ բեմից, սպիրտի լամպայի ընկնելուց:
Հանդիսականները ոչ թէ աղմուկեցան, այլ կրակը
տեսնելով երկրիցն միմեանց վրա թափվելով,
միմեանց խեղդեցին: Շատերը իրանց նետում
էին պատահաններից փողոցի վրա և սպանվում
էին: Ստում են, որ զոհերի թիւը հասնում է
900 ի:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 դեկտեմբերի: Լրա-
գիրները դեկտեմբերի 7-ից հաղորդում են,
որ առանձին մասնագիտող վերաբնում է
Ջրային հաղորդակցութիւնների կանոնա-
դրութիւնը:

ՓԱՐԻՑ, 7 դեկտեմբերի: Բուստան Փրան-
սիական զեպան է նշանակվում Աթէնքի
մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 դեկտեմբերի: Պետա-
կան բանկի 5% տոմսակը առաջին շրջանի
արժէ 93 ռ. 25 կ., երկրորդ 90 ռ. 75 կ.,
երրորդ 91 ռ. 5 կ., չորրորդ 90 ռ. 75 կ.,
հինգերորդ 90 ռ. 62 կ., ներքին 5% առա-
ջին փոխառութեան տոմսակը արժէ 224
ռ. 75 կ., երկրորդ 216 ռ. 75 կ., արեւե-
լեան առաջին փոխառութեան տոմսակը
արժէ 90 ռ. 25 կ., երկրորդ 90 ռ. 25 կ.,
երրորդ 90 ռ. 25 կ., սակի 7 ռ. 80 կ.:
Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,35 1/2
պենս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա ար-
ժէ 216 մարկ 38 1/2 պֆ., ֆարիզի վրա 267
ֆրանկ 5 սանտիմ: Բորսայի տրամադրու-
թիւնը հանգիստ է:

ԽՈՐԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿԻՈՂ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

տիկ բարեխում էր: Նրեկտա այժմ աւելի ան-
հանդիստ էր, գտնվում էր ջերմի մէջ, և երբեմն
ամբողջ մարմնով ցնցվում էր, կարծես աղախին
անդով մասնները կրկին սեղմվում էին նրա
կոկորդի վրա: Եթէ նա գիտենար իր հետ պա-
տահածը, բոլորը կը պատմէր մօրը, բայց ամեն
ինչ կատարվեցաւ նրա հետ, երբ նա քնած էր:
Կանանոցի բազում վառված էին չորս լապ-
տերներ միայն, որոնք սեղմված էին չորս սիւների
գլխին, և իւրաքանչիւրը գտնվում էր քառակուսի
բակի մի անկիւնում: Հարմեների օթնակների
լուսամուտներից լոյս չէր երևում: Նրանք քնած
էին, թէ արթնում,—յայտնի չէ, բայց որովհետեւ
նրանց հրամայված էր «Երեւոյ», թէկուզ աշխարհն
էլ տակնուվրա լինէր, պէտք է ցոյց տային, որ
քնած են:

Ներքինին աղախին հետ մօտեցան առաջին
դռանը, կամաց բաղնիքին: Գուան հոտեց հարց-
րին:

— Գիշերվայ անուշը:

— Փառիսան, պատասխանեց ներքինին հազիւ
լսելի ձայնով: Գուները բացվեցան:

Կանանոցի բակից դուրս գալով, նրանք մտան
մի կրկայն ծածկված դալան (կորիդոր), որ լու-
սաւորված էր երկու լապտերներով: Այստեղից
մի գուռ տանում էր դէպի մի երկրորդ փողոցի
բակ, որտեղ էր կանանոցի կռահանոցի: Այդ
դռնից անցնելու համար դարձաւ նոյն հարցը և
պատասխանը արվեցաւ: Այսպէս նրանք անցան
մի քանի բակեր, մի քանի դալաններ, միշն
դուրս եկան իմանի պալատի լալերինթոսից:

Գրտում տիրում էր խաւար: Իսկ բերդի փո-
ղոցների մէջ աղմուկ և իրարանցում: Մարդիկ
խեղազարի նման զուգում-զուգումներով փաղկւում
էին: Աղախինը ներքինու թողեց կէս ճանա-
պարհի վրա, պատուիրելով իրան սպասել, իսկ
ինքը շտապեց դէպի Սաւայի տունը:

(Իւր շարունակի)

բարձրութիւնից ամեն մի շարժում, ամեն մի
չնշխն լրտեսում էր:

Լսեց միայն մէկը, որ աւելի պատճառ ունէր
չը լսելու, լսեց նա, որ ուշաթափ, գեանատա-
րած, ընկած էր իր սենեակի յատակի վրա:
Հէնց որ դժբաղդ մօր ականջին դիպաւ «Բեկդ-
վում է» բառը, նա մի մոգական հարուածքով
ցնցվեցաւ, աչքերը բաց արաւ, սկսեց չփոխված
կերպով նայել իր շուրջը: «Ոգնեցէ՛ք» բառը
բոլորովին արթնացրեց նրան: Նա խիղճի վեր-
թաւ և վազեց աղախին սենեակը: Այստեղ
հրաջ չը կար նրկար նա խաւարի մէջ խորխու-
փելով, որտեղ էր դաւակի անկողինը, մինչեւ
աղախինը և ներքինին ճարգով ներս մտան:

Նոյեմբերի դեռ լաց էր լինում: Կոկորդի խնը-
խոնքը փայլում վերջացած չէր. յետոյ սկսեց
թրել արեւն, շարուն հետ խաւան: Երևում էր,
որ աղախին մասնների ստատիկ ճնշուլուց, կո-
կորդի ուռուցքը պայթել էր և այժմ դուրս էր
ժայթքում այնտեղ հաւաքված չաբաւը: Այդ
թէն օգտաւէտ էր հիւանդին, բայց աղախին
գործողութիւնը ոչ նրան բռնկելու և ոչ խեղ-
դելու նպատակ ունէր: Նա միայն ցանկանում
էր հիւանդի վրա դարձնել մօր ուշադրութիւնը
և հասաւ իր նպատակին:

Տեսնելով իր գաւակի դրութիւնը, մայրը մո-
լեղնաբար գրկեց նրան և սկսեց լաց լինել:

— Հիմա կը մտնի երեխա... կը մտնի,
ֆարիշան, հաւաքում էր նա, գաւաւելով դէպի
աղախինը:

— Փարիշանը մատաղ լինի քո հոգուն, արկին
ջան, պատասխանում էր աղախինը: Գաւաւելած
ձայնով, և ձեռնցնելով, իբր թէ արտաւառք ար-
բում է.— երկուց չը կայ, ամենին երկուց չը
կայ: Վտանգը անցաւ: Թող Ստումած Ֆարիշ-
ան (այնպէս էր երեխայի անունը) ցաւը իմ վրա
բերէ, եթէ նրան մի բան պատահի:

Ներսին ներքինին ստաւած կանգնել էր, հե-
ռուից նայում էր ցաւալի տեսարանի վրա:
Աղախին խօսքերը չը հանգստացրին մօրը, մա-
նանաղ երբ երեխան, թէն զաղախին լաց
ինկուլուց, բայց գլուխը դրեց մօր կուրծքի

